Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18399

891.99
S-37

(62)

891.542-2
S-37

ԺԼՍՏ

ԿԱՏԱՐԱԳՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔ ԱՐԱՐԱԾՈՅ

ԳՐԵՑԱ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ-ԱՒԳԻԱՅԵԱՆ

Ի տեղ, արտագրեալ ի Հիւրմանկէն.

ՌՈՍՏՈՎ. (Դոնի վրայ)

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ՏԷՐ-ԱՒԳԻԱՅԵԱՆ

1873.

891.99
S-37

891.99
S-37
Ար

ԺԼԱՏ
ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

ԳՐԵԱՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ-ԵՐՈՒԱՆԴԵԱՆ

Ի դէպ, պրէտգրէալ է հեղինակէն.

1001/4080
12003

ՌՈՍՏՈՎ
Տպարան Յովհաննէս Տէրութիւնեանի
1878

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Ս. ՍՅԱՍՆԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
Ереван, Абовян
7/XI 1922

4188

ԴԵՐԱՍԱՆՔ·

Իշխէր Գալուստիչ Քարհանով	Ժէատ·
Իշխէրոյ	Ծառայ նորա
Վարդան Սազման	Ուսեալ երիտասարդք
Մամիկոն Գէորգեան Քարծախեանց	Որդեգիր Քարհանովի
Դրացիք Քարհանովի	Ն· Ն·
Պաշտօնատարք Բարեկարգարանին Ռուսաց	Ն· Ն

Գ·ոբշ·ոզ–Ոկ–Ոն է է Խրէմ, է պան Վ·ԱրՀանովի·

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 21 Февраля 1873 г.

ԸՐԸՐՈՒԸՆՕ ԸՈՒԸ,ՉԻՆ

ՑԵՍԻԼ Ա.

(Վ·ԱրՀանովի տունը ժողուած ու կարգաւորուած է արեւելքի ժլատ վաճառականաց տունեկրուն պէս. ինքը աղտոտ գիշերազգեստ (խալաթ) մը հագած է: Սենեկին մէկ կողմը ստրկի մնտուկը դրուած է, իսկ միւս կողմը՝ փայտէ հասարակ սեղան մը, որոյ վրան մէկ աշտանակ, համրիչ ու թանաքաման դրուած կլինի և դիմացը հին աթոռ մը: Վարագոյրը բացուելուն պէս՝ համրիչը սեղանին վրայ կթողու, և ժողովրդեան դառնալով՝ կըսէ.)

ՔԱՐՀԱՆՈՎ·

Տեսա՞ք ինչ ըսել է խելօքութիւնը, ի՞նչ ըսել է խարճ ու մասրաքի գիտնալը: Իրաւ է, թէպէտ շատ անգամ ինքզինքս զրկեցի էշլիտ էշլիտ կերակուրներ ուտելէն, բայց ամենևին փոշման չիմ՝ այն քաղցածութեամբ անցուցած օրերուս վրայ: Շատ ատեն բարեկամներս իմ՝ ասպէս ըրածիս համար՝ ինծի մարդու սրա չընելով ու „ժլատ ես“ ասելով՝ կամթէն

ինծի. բայց չեն գիտեր խելքի աղքատ-
ները թէ՝ օր մը քիչ ուտելով, օր մը ծոմ
պահելով, օր մը դրացինին տունը փորս
կշտացընելով, օր մըն ալ ասոր անոր կե-
րակուրին վրան հանելով՝ տարուան մէջ
որքան մասրաֆսըզ օրեր կանցնին ու ի՞նչ
խըստար ստակ թօփ կըլայ մնտուկիս մէջը:
Ես իսա խըստարը գիտեմ, որ այն ժլատ
ես ըսողները՝ ստակն ի՞նչ բան է, — չե՛ն
գիտեր. սալթը մէկ բան մըն է, առեր ըն-
կեր են՝ թէ „Ուսում պէտք է տղոցը“.
բայց չեն գիտեր խեղճերը որ չոր ու ցա-
մաք ուսումը՝ փոր չի կշտացներ: Ուսում
ըսածդ՝ ստակն է. ստակ ունի՞ս մի, — համ
ուսում ունիս, համ խելօք իս: Դուն հա-
զար ըսէ, որո՞ւ կըսես. անոնք կէնէ իրենց
նոր հաւան կչալին. թէ ուսումին մէջն
է խելքն ու աշխարքիս հարստութիւնը...

Աղբար կասիմ, սիսալուած իս.

Դուն ինձ վրայ լաւ մը նայէ, որ չըգիտեմ անու-
նըս զրսել,
Ընդ հակառակն փողը սընտուկս հաղարաւոր ձագ է
հանել:

Որո՞ւ կըսես... Հալէսը ի՞նչ կասին, ա-
նոնք ալ անոնց բերանը կնային: Իսա
խըստարս դուն անկաջիդ օղ արա կասիմ,
որ ամէ՛ն բանի ճարը ստակն է աշխարքիս
վրայ. մարդուս սուտ աստուածը՝ ան է,
ան է որ հիմա փառաւոր կերպով կեցած է
աս իմ սիրելի մնտուկիս մէջը:

Էհ, սիրելիդ իմ մնտուկ, աս քա-
նիո՞ւմ օրն է որ երեսդ չիմ տեսած, քա-
նի՞ ատեն է հիսապդ չիմ նայած. բայց
այս իմ անհոգութեան համար՝ կրնաս
միայն ասով գոհ ըլալ, որ ամէ՛ն բոպէ
մտքիս մէջն ես:

(Յետոյ սաղկի քսակը կհանէ սընտուկէն, և վեր
ի վար ձգելով կըսէ).

Ընոնք ի՞նչ գիտին փողին պատիւը.
Փող — աշխարհ շինող,
Փող — մարդիկ փըրկող,
Փող — լեզու տըւող,
Փող — անուն հանող,
Փող — իմ հոգւոյս ցօղ...

(Այս խօսքին վրայ դուռը կզարնեն, և ծառան կմտնէ.)

ՑԵՍԻԼ Բ.

ՄԵԼՔՈՑ, ՔԱՐՀԱՆՈՎ.

ՄԵԼՔՈՑ.

Աղա, երկու մարդ եկիլ էին, հրաման կանի՞ք ներս ծան տամ:

ՔԱՐՀԱՆՈՎ. (շփոթած ոտակը անոռուկը դնելով).

Ի՞նչ մարդիկ են . . . ի՞նչ կուզեն: — Ը՛ռաջ կճանչնա՞ս նոցա:

ՄԵԼՔՈՑ.

Աղա, մէկը հաճի Աբիստակին տղան է, մէկալն ալ Խոճա Մինասին տղան:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Ը՛ա հա՛ հա, հասկըցայ: Ինոնց պապանները իմ լաւ բարեկամներս էին. զա՛վալլը մարդիկն ալ „Ուսում պէտք է տըղոցը“ կանչելէն մեռան ամմա, շինտի ա-

նոնց անունը ալայ-մալայ (1) փճացուցին ատ տղաքը: — Ի՛նչ ալ ըլայ ներս ծան տալու է: (Ծառան կուգէ ելնել.)

ՔԱՐՀԱՆՈՎ.

Մ՚ելքոյ:

ՄԵԼՔՈՑ (Խսկոյն յետ դառնալով).

Ը՛րամէ՛, աղա:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Ը՛ռաջէ, հոս արի. իտա մարդոց ձեռ-քերը բան տեսա՞ր մի:

ՄԵԼՔՈՑ.

Աղա, ի՞նչ բան:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Ը՛ռաջէ, բանը չի՞ս հասկընար. պօխչա մօխչա, անպէս բան չունի՞ն ձեռքերը:

---

(1) Բոլորովին:

ՄԵԼՔՈՑ.

Աղա, մէկին ձեռքը բան չըկար ամա, մէկալին ձեռքը ինծի անպէտնակ կուգայ թէ մէկ փլաթօքով բան մը տեսայ:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Լաւ է, ի՞նչ ըսել է „ինծի անպէտնակ կուգայ“. զայիր կալաճի (1) ըրած իքէնդ քո՞ն կըլայիր:

ՄԵԼՔՈՑ.

Աղա, քուն չէի ըլար ամա, աղէկ չը-նայեցայ:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Տէ հայտէ, հայտէ բացբերան. գնա շուտով ծան տուր, զէրէ մարդիկը պէք-լէյէլէն մէմն եղան:

---

(1) Խոսակցութիւն.

ՑԵՍԻԼ Գ.

ՔԱՐՀԱՆՈՎ (ինքն իրեն խօսելով).

Բալլիքը ճէպս է, ամա, աճապ սը-տուկս կպղեցի՞ չէ նէ խօսքի բռնուելով բաց ձգեցի. (Դայելէն յետոյ.) Ըէ, խօսքի բռնուած ալ ըլամ, կէնէ ես իմ բանս գիտիմ: — Ա՛ս աղէկ ամա, ասոնք ի՞նչ բանի եկած պիտի ըլան ինծի աճապ.... Ատամ, պէլլի՞ մը չէ, զայիր եա աղերը պակաս է, եա մաղերը:

ՑԵՍԻԼ Դ.

ՔԱՐՀԱՆՈՎ, ՎԱՐԴԱՆ, ՍՈՂՈՄՈՆ, ՄԵԼՔՈՑ.

ՎԱՐԴԱՆ ԵՒ ՍՈՂՈՄՈՆ.

Здравствуйте, Меликъ Калустичъ.

ՔԱՐՀԱՆՈՎ (ձեռքերը բռնելով).

Բարի եկաք. հրամեցէք նստէք: — (Դէպի դուռը դառնալով.) Մ՛ելքոյ:

ՄԵԼՔՈՑ·

Հրամէ՛, աղա:

ՔԱՐՀԱՆՈՎ

Հաճէ, դնա՛ ան դուսի դրած եաշչիքը բեր սրտեղս դիր: (Հիւրերուն դառնալով.) —Է՛, տահա ի՞նչպէս հարցընենք:

ՎԱՐԴԱՆ·

Փա՛ռք Աստուծոյ, հրամանոցդ հարցընելու է:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Է՞՛ մեզի հարցընելու տեղ մնաց որ. իշխէ դուք ալ կտեսնիք որ մէկ կողմէն ծերութիւնս կոխից, մէկալ կողմէն՝ ակռայիս ցաւը. մէկմէկ ատեն ա՛նպէս ռահամթսրզ կըլամ որ ինքս ինծի կմոռնամ:

ՄԵԼՔՈՑ (եաշչիքը բերելով)·

Աղա՛, հա՛նա եաշչիքը:

ՔԱՐՀԱՆՈՎ (Մելքոյին դառնալով)·

Հաճէ ախմախ, ինծի ի՞նչ կցուցունուս եաշչիքը. ես ան վաղուց տեսիլ իմ: դուն իտա տեղը դիր որ միսաֆիրներս նստին:

ՄԵԼՔՈՑ (եաշչիքը յատակէն ղարնելով կասէ)·

Իշխէ ձեզի ամթոռք:

ՔԱՐՀԱՆՈՎ (Մելքոյին վրայ բարկանալով)·

Հաճէ, դուն կորսուէ՛ սրտեղէն. (Հիւրերուն դառնալով) — Հրամեցէք նստէք:

ՍՈՂՈՄՈՆ·

Մելիք Գալուստիչ, ատ խըտար որ պէզիհաքցիթսեա կըլաք, ինչո՞ւ ձեր ակռայի ցաւին ճար չիք անել տար:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Աստամ Աստուած ան հէքիմներու պէլանները տայ: Ակէց օխթը տարի առաջ Փէրշալ մը ծան տուի, համ 25 քափիքս առաւ, համ ա՛նպէս ճար տուաւ որ իսա

ետեւի ինը ակռաս թափեցաւ: Ընկէց վերջն ալ՝ Зубной врачь (1) է, ինչ պապայիս ցաւն է՝ ասին եկիլ է դիմացէն, գնացի որ հիչ օլմասա հինգ ակռայիս տեղը նորը շինել տամ, ան ալ 15 բուպլիէն պակաս չիմ անիլ, ասաց. վազ անցայ գնաց:

ՍՈՂՈՄՈՆ·

Մելիք Գալուստիչ, ատ խիստ աժա՞ն ուզիլ է ու:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Ի՞նչ աժան ուզիլ է, տասնըհինգ բուպլի... 15 բուպլին տիւնեային փարան է, ես հիչ կուտամ՝:

ՎԱՐԴԱՆ·

Ի՞նչ ասիք ու չտուիք:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Ի՞նչ պիտի ասէի. անպէս բան ասի որ, մարդը վրաս նայելէն նայելէն մէջմին եղաւ:

ՍՈՂՈՄՈՆ·

Կէնէ-կէնէ,—ի՞նչ ասիք:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Դուն, ասի մարդուն, հինգ ակռայ դնելու համար տասնըհինգ բուպլի կուզես չէ՞... երսուն բուպլի տուր ինծի՝ մնացած քսանուիրեք ակռաս ալ հանիմ քեզի տամ՝:

ՍՈՂՈՄՈՆ, ՎԱՐԴԱՆ (բարձր խնդալով)·

Հա՛, հա՛, հա՛. հա՛, հա՛, հա՛.....

ՍՈՂՈՄՈՆ [առ Վարդան·]

Съ подобнымъ человѣкомъ, я первый разъ встрѣчаюсь (1).

ՔԱՐՀԱՆՈՎ

Նա իմ ցաւին ճարը գիտիմ. դուք ձեզի նայեցէք:

(1) Ատամնաբոյժ:

(1) Այսպիսի մարդու հետ առաջին անգամն է որ կռեսնուիմ:

ՎԱՐԴԱՆ·

Մեր ցաւը, Մելիք Գալուստիչ, ձեր ցաւին պէս նամթուրանիյ ցաւ չէ:

ՍՈՂՈՄՈՆ (առ Վարդան)·

Ну скажи же, что́ тамъ цѣлый часъ разговоривать! (1).

ՔԱՐՀԱՆՈՎ·

Գիտիմ, գիտիմ. խո՛րթ որ իմ ցաւին պէս չէ ձեր ցաւը:

ՎԱՐԴԱՆ

Ի՞նչ է մեր ցաւը, ըսէք նայինք, Մելիք Գալուստիչ:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Ձեզ, աղբարս, գիտիք ինչ կայ, ձեզ ուրիշ ցաւ չունիք. ձեր ցաւը ճէպի ցաւ է, ճէպի (Գլուխը շարժելով)·

(1) Ասա, ի՞նչ այդչափ կերկընցունուս:

ՍՈՂՈՄՈՆ·

Браво! Браво! Մելիք Գալուստիչ, աֆէրիմ. անպէս ասիր որ թա՛փ գլխուն զարկիր:

ՑԵՍԻԼ Ե.

ԱՌԱՋԻՆԲԷՆ ԵՒ ՄԵԼՔՈՑ.

ՄԵԼՔՈՑ·

Աղա, երեկ մէկ մարդու մը խօսք տուիլ իք եղել է. եկիլ է, ծան տա՞մ:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Երե՞կ... հա, գիտիմ. ան ալ ճէպի ցաւ ունեցողներէն է: (Մելքոյին դառնալով)· Հաճէ, գնա ասա որ արթըխ ուշ է, աղան պառկելու վրայ է. էկէր կրնայ նէ՝ վաղը հօրսուկը (1) թող գայ:

ՍՈՂՈՄՈՆ (կողմնակի առ Վարդան·)

Ну скажи же, можетъ въ самомъ дѣлѣ

(1) Կէսօրին կամ ճաշուայ ժամանակ:

онъ въ это время спать ложится; мы вѣдь опоздаемъ отъ сегодняшнаго вечера ([1]).

ՎԱՐԴԱՆ·

Մելիք Գալուստիչ, ես ձեզիմէն բան մը պիտի խնդրեմ, խօսք կուտա՞ք որ խնդիրքս կատարէք:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Էկեր ըլալու բան է նէ՝ ինչո՞ւ չէ:

ՎԱՐԴԱՆ·

Մելիք Գալուստիչ, ինծի երկու շաբաթուան համար եթիշխինգ բուպլի ստակ պէտք է, կրնա՞ք տալ:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Տալը աղէկ ամա, մէկալ բանը ունի՞ս:

ՎԱՐԴԱՆ·

Մէկալ բանը ի՞նչ ըսել է, ես ատ խօսքը չհասկըցայ:

([1]) Ասա, կարելի է որ իրօք նա այս ժամանակս պառկել կուզէ· մինչ ուրեմն կուշանանք այսօրուան խնջոյքէն:

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Public Library
7/XI 1922
Ս. ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՔԱՐՀԱՆՈՎ·

Դովս ձգելու բան մը,—գրաւ, ռէհին, զալօկ, հասկըցա՞ր:

ՎԱՐԴԱՆ·

Ի՞նչպէս չէ. մէկ տիւժին սթօլի, և քսան հատ չայի արծըթէ դգալներ բերիլ իմ:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Ո՞ւր է, նայիմ.—փրօպ ունի՞:

ՎԱՐԴԱՆ (արծաթեղէնը Քարհանովին տալով)·

Ատ ի՞նչ խօսք է, Մելիք Գալուստիչ. մի՛թէ ձեզ խաբելո՞ւ եկիլ ինք:

ՔԱՐՀԱՆՈՎ (ակնոցները դնելով)·

Աչքս լաւ չի տեսներ. 4-ը կերևնայ ամա, տակն ի՞նչ եղածը պէլլի չէ:

ՎԱՐԴԱՆ·

Մելիք Գալուստիչ, ատ թէմիզ արծաթ է վօսեմտեսեաթ չէթվերթիյ փրօպ, Փեթերպուրկէն եկած. ատոր շինող վարպետը Լոնտոն կկենայ հիմա:

ՔԱՐՀԱՆՈՎ (ձեռքին մէջ ծանր ու թեթև ընելով).

Վարդան աղբար, քեզի բան մ՝ըսեմ. սըտեղս քանըհինգ բուպլիի արծաթ եա՛ կայ, եա՛ չկայ:

ՍՈՂՈՄՈՆ (Վարդանի տեղը խօսելով).

Ո՛չ Մելիք Գալուստիչ, ուզենաք նէ՝ կրնաք քաշել: Ամ արծըթեղենի համար ես կհաւատացընեմ ձեզ Հայու խօսքով, որ իմ աչքովս տեսայ ու կարդացի Պ. Վարդանի հօր՝ Հաճի Երիստակին տէֆթէրին մէջ, որ 95 բուպլիի առած է. բայց որովհետև հիմա ստակ պէտք է Պ. Վարդանին, յիսուն բուպլի տալը՝ մեծ բան չէ ձեզի համար. մանաւանդ որ ա՜նոր տուած ռէհինը՝ ձեր տալու ստրկին դիմաց երկու խաթը գին ունի:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Ըսածդ պէլքի շիտակ է ամա, աս ալ կայ որ „Ստակ չվաստրկողը՝ ստրկի խաթրը չի գիտնար“ կասեն: Պէլքի ա՜տոր առնողը խենթ է եղեր, ե՞ս ալ պիտի

խենթնամ... Ինծի հարցընիք նէ՝ քառասուն բուպլիէն աւելի քափիք մ՝ալ չեմ ի տար: (Համրիչին վրայ մտքէն խօսելով՝ կհաշուէ արծաթի գումարը.)

ՎԱՐԴԱՆ.

Մելիք Գալուստիչ, չինքի աւելի չուզիք տալ, ինդրեմ շուտով լմընցընէք, որ ժամանակ չունիմ շատ կենալու:

ՔԱՐՀԱՆՈՎ

Շուտ ընեմ ամա, տասնըհինգ օրւան փրոցենթը չորս բուպլի կընէ. ան ալ խայի՛ լ իս տալու:

ՎԱՐԴԱՆ.

Չո՛րս բուպլի... (Ընկերին կողմնակի). Вотъ безсовѣстный человѣкъ! (1) Տուէք, Մելիք Գալուստիչ, ի՞նչ անիք. „անճարը կերիլ է բանճարը“ կասին Հայաստանցիք, թամամ մեր բանը դարձաւ:

(1) Ահա անխղճմտանք մարդ:

*

ՔԱՐՀԱՆՈՎ (դրաւականը մնտուկը դնելով ու մնտուկէն ստակը հանելով)

Աղէկ, աղէկ, տամ. բռնէ ձեռքդ: Իշթէ քեզի 5, մէմալ 5,=10. աս ալ 3,=13. մէմը 3,=16. նայէ նայէ, ի՞նչպէս նոր ստակներ են... (Վարդանը պաղ պաղ Քարհանովի վրան կնայէ. իսկ Սողոմոնը ժլատի արածին վրայ զարմացած՝ ժողովրդեան դառնալով կասէ.)

ՍՈՂՈՄՈՆ.

Սըւոր արած բանէրը նայեցէք:

ՔԱՐՀԱՆՈՎ [առ Վարդան].

Նա՛, աս ալ 3,=19. մէմը տահա 3,=22. մէմնալ 3,=25. կէսն անցանք, գիտի՞ս. նայէ ի՞նչպէս կցոլայ,—գո՛ւնդ սիրիմ...

ՎԱՐԴԱՆ.

Աշ, Մելիք Գալուստիչ, աս ի՞նչ չէշիտ բաներ կանիք. շուտ արա փոժալուսթա, ժամանակ չունիմ:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Կէսն ալ վաղը կուտամ. ալայն ալ աս գիշեր խարճելու չի՞ք եա:

ՎԱՐԴԱՆ (առ Սողոմոն).

Ну, что это за наказаніе! (1) Լմընցուր փոժալուսթա:

ՍՈՂՈՄՈՆ.

Մելիք Գալուստիչ, դուք ձեր տալը նայեցէք. մեր խարճելուն հետ ի՞նչ գործ ունիք:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Հապա, հապա, ստակը տալէս վերջը հէլպէթ ձեր խարճելուն հետ գործ չունիմ. զէրէ դուք սալթը խարճելու համար աշխարք եկիլ իք:

ՎԱՐԴԱՆ (Սողոմոնին դառնալով).

Перестаньте пожалуйста, пусть оканчиваетъ (2).

ՔԱՐՀԱՆՈՎ (առ Վարդան).

Նա՛, աո՛, մի՛ լար. ի՞նչ աւտ խըտար նաղլանմիշ կըլաս. բռնէ. 31, երսու....

---

(1) Այս ի՞նչ պատժի հանդիպեցանք:

(2) Թողուցէք խնդրեմ, որ վերջացնէ:

ՎԱՐԴԱՆ (Քարհանովի խօսքը կտրելով)։

Կեցիր կեցիր։ ի՞նչ երսունըմէկ։ . .— Դասընհինգ՝ մէմալ 3, — երսունըմէ՞կ կընէ զայիր . . .

ՍՈՂՈՄՈՆ (Քարհանովին)։

Ի՛նչ երսունումէկ, քսանուԹ կանէ, քսանուԹ։

ՔԱՐՀԱՆՈՎ (առ Սողոմոն)։

Դուն սուս, դուն սուս։ ալայդ ալ խօսքի մէջ մտնելու ըլաք, հէլպէԹ հիսապը շիտակ չելլեր։ (Վարդանին դառնալով ու սխալուիլ ձեւացընելով)։

ՔԱՐՀԱՆՈՎ։

Առաջ 25 տուի հա՞։ հէյ կիտի ծերուԹիւն . . . Ամենով հազարներ կուտայի ու կառնուի, մէկ օր մը եանլըշ հիսապ չէր անէի, շինտղ, հէյ կիտի աշխարք, տըւած ստրկիս ճէմը պիլէ կմոռնամ . . . Ինպէս է նէ՝ 25, մէմալ 3,=28. աս ալ 1,=29. տահա 1,=30. նայէ, տալու ատենդ, դուն ալ ասպէս նոր ստակ պիտի տաս, գիտի՞ս։

ՎԱՐԴԱՆ (ձանձրացած)։

Тьфу ты Боже мой, (1) աս ի՞նչ պէլայի հանդիպեցանք։ ասոր վերջը պիտի ըլա՞յ, չէնէ չէ՞։

ՔԱՐՀԱՆՈՎ։

Նա՛, նա, գլուխս մի՛ ցաւցուր։ ի՞նչ ատ խըտար ինքզինքդ մեծացուսցէ կանիս։ Ռունէ։ 30 տուի, անպէս չէ՞ մի։

ՎԱՐԴԱՆ։

Երսուն, երսո՛ւն։

ՔԱՐՀԱՆՈՎ։

Աս ալ 3,=33. աս ալ 1,=34. տահա 1,=35. մէմնալ տահա 1,=36։ Ամընցաւ։ սիրտդ տեղն ինկաւ։

ՎԱՐԴԱՆ։

Մելեք Գալուստիչ, քառասուն ռուպլի խոստացիլ էիք ու։ ինչո՞ւ երսունըվեց կուտաք։

---

(1) Ախ տէր Աստուած։

ՔԱՐՀԱՆՈՎ.

Հապա փրոցե՞նթը:

ՍՈՂՈՄՈՆ (դեպի ժողովուրդը՝ ինքն իրեն խօսելով).

Փրոցենթն ալ առջևէն կուգէ առ-նուլ. Ամբերիմ Մելիք Դալուստիչ, իրեն ֆայտան խիստ աղէկ գիտէ: Ողորմած-հոգի պապաս կասէր թէ անպէս մարդիկ կան որ ասեղ կուտան ու տեղը մա-խաթ կուզենան ձեզմէ, ես չէի հաւատար, հիմա կտեսնեմ որ շիտակ կասէ եղեր . . . ալլէհալում աս . . . .

ՎԱՐԴԱՆ (Սողոմոնի խօսքը կտրելով).

Ո՞հ, Մելիք Դալուստիչ, շատ ժլատ մարդ իս եղիլ է: Դառնուն ռուպլիին՝ երկու շաբթուան համար՝ չորս ռուպլի փրոցենթ կուտամ, տահա կուզիս որ ան ալ առջևէն առնուս:—Շիտակն ըսեմ.

Ժլատ բառը շատ լրսած եմ,
Բայց քեզ նման հիչ տեսած չեմ:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Ի՞նչ . . . (Բարկացած արագ արագ կքալէ

ու ինքնիրեն դատողութիւններ ընելով կըսէ.) Ես իմ ստրկին տէրը չիմ մի. իշթէ քեզի, կուզիս առ, կուզիս մի՛ առնուր: Ա՛ռաս կնայիս որ վատիլ իմ, անոր համար ժլատ իս կասիս. դուն մի՛ վախնալ, ես քեզ նման քամի կուլ տուողներ շատ տեսեր եմ.

Իմ կերած սոին ու պրասը,
Դեռ չէ՛ կերած Լուկուլլասը:

ՎԱՐԴԱՆ.

Ատ արթըիս շիտակ ասիր. զերէ վրա-յէդ պէլլի է.

Ուզենալով շատ փող ժողվել,
Կուշտ փորով մը հաց չես ուտեր:

ՔԱՐՀԱՆՈՎ (դարձեալ բարկանալով ու քթախոտը քաշելով).

Ինկեր ատ խօսքերը քիչ մը առաջ ասած ըլայիր, ես գիտէի թէ քեզ ի՞նչ-պէս կճամբէի. ստակն առար, լեզուդ եր-կընցաւ հա՞:

ՎԱՐԴԱՆ.

Մելիք Դալուստիչ, ինչպէս որ կե-ռնայ, ժլատութենէդ կամ խրզղանչու-

թենէդ պաշխայ, բարկացող ալ ես. անպէս է նէ, մնաս բարով (կելնէ Պողոսենն ալ հետը)։

ՔԱՐՀԱՆՈՎ.

Երթաս չարով,
Ձրգաս տարով.
Ոտքըդ կոտրի՝
Ջաղցի քարով։

(Այս խօսքէն վերջը դուռը ետևներէն կփակէ)։

ՑԵՍԻԼ Զ.

ՔԱՐՀԱՆՈՎ (Տիճաղերես ժողովրդեան դառնալով).

Հա՛, հա, հա. իշխէ քեզի մասխարկութիւն։ Հէյ կիտի ստակ. ստակ ասածդ մե՛ծ բան է, զէրէ մինչև 36 բուպլի տուի նէ՝ մայմուտի պէս խաղցուցի զիրենք... Ջա՛վալը տղաքը, էփիէյի շէնք հնորք ունի՛ն ամա, ստակ պահել չիգտեն, ուսում ունի՛ն ամա, խե՛լք չունին. ինչո՞ւ ասիք նէ՝—մէմը որ ճէպեռուն մէջը միներ կխաղան, մէմն ալ աս որ ստակը տուածիս պէս՝ մէկէն առան՝ առանց համրելու ելան գնացին. օ՛ինած, մէմը նայէ վրան, պէլքի պակա՞ս է, պէլքի շինծո՞ւ է, պէլքի նումրան ուրի՞շ է։ Հա՛ հա՛ հա՛, ինծի ժլատ ես կասեն... Դ՚առաստն բուպլիին տեղը դուն 100 բուպլիի ռէհին ձգէ քովս, երկու շաբթուան մէջ՝ 4 բուպլի փրօցենթն ալ տո՛ւր տէ, կուզես ժլա՛տ ըսէ, կուզես անամո՛թ ըսէ, կուզես անօրէն ըսէ.... Բանի մը մէջ քաւիք ըլալէն վերջը, ի՞նչ կուզես ըսէ։ Դուն հաց տուր ուտեմ, փորս կշտացընեմ՝ ու, ետքը կուզես նէ՝ ետևէս քաղցած շուն կանչէ. կէ՛նէ խայիլ իմ, կէ՛նէ խայիլ իմ, կէ՛նէ խայիլ իմ....

(Ս ՀարագոյՐը կիջնայ)։

ԸՐԸՐՈՒԱԾՈ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

(Քարհանովի սենեակը մի և նոյն կմնայ. սենտուկին դիմացը հասարակ մահճակալ (кровать) կը-դրուի, և ժլատը բաց սնտուկին դիմացը ակնոցներով նստած կլինի: Վարագոյրը բացուելուն պէս՝ կըսէ.)

ՔԱՐՀԱՆՈՎ (Ինքն իրեն խօսելով).

Զարմանք բան. ասօր 17-ինճի օրն է, ու տահա 40 բուպլի ստակս չբերին ի-տա տղաքը: Ճապ չի՞ն բերի կասիս... Էկէր չբերին նէ՝ սանքիմ ի՞նչ զարար, Թող իրենք Փիքը անին ու ետևէս քալին. ես մէկին տեղը իրէ՛ք խաթը ռէհին առի: Էն չէ ամա, ասօր ան խըտար մարդ ե-կաւ որ պէղմիզ եղայ, ու ատեն պիլէ չու-նեցայ որ քիչ մ՚ալ իմ գործս նայիմ: Ընճամի մէմը մինակ մնացի. (դուռը գոցելով) երեկուընէ ի վեր սնտուկս նայած չիմ,

ո՞վ գիտէ շինտղ ինչ եղաւ ի՞նչ չեղաւ, մեյմը աչքէ անցնելու է. ծնսուզ ալ՝ երեկ գիշեր զավալլը (1) Դասպարին տունը կոտրիլ ին: Ամա չէ. ստակներս տահա երեկ համրեցի, մէկալ բաները նայելու է: (Առաջին կապոցը հանելով.) Էհէյ կիտի խօճա Մկրտիչ, աս քու յիշատակդ է: Քառ-սուն բուպլիի բանը բերաւ ողորմած-հո-գին՝ 15 բուպլիի ռէհին ձգից (2) քովս 10 օրուան համար. չորս օրէն ետքը մեռաւ ու անպէսով ինձի մնաց: (Գլուխը շարժելէն՝ սնտուկին միւս կողմը դնելով.) Կեցի՛ր, կեցի՛ր ճանս ատ փափուկ տեղը. դուն խսա տե-ղէն դուս ելլելիք չունիս: (Երկրորդ կապոցը հանելով.) Ը՞ս ինչ պիտի ըլայ ասճապ... Էա՛, աս իմ 40 տարուան մահլաներէն ժողված աշխատանքս է. նայէ նայէ, ինչ խըտար չէշիտ բա՞ն,—հիսա՛պը չի կայ... (Ժողովրդեան մէկմէկ ցուցընելով.) կաշիի տեսա՛ք կտորներ, ձիու նալներ, կպղաքներ, չէշիտ

(1) Խեղճ:
(2) Գրաւ դրաւ:

չէշիտ գամեր, կոտրած ստաքաններ, վաքսի պանքաներ, ճարի շիշաներ, խոշոր միտիայի ոսկորներ, հազար չէշիտ լաթի կտորներ, ու տահ։։ որ մէկն ըսեմ, բան շատ . . . Հինտղ մէկալ բաները նայինք. (Երլոդ կապոցը հանելով)։ Ա՛ա, գիտիմ, գիտիմ որ կապոցն է։ Ա՛ս ողորմած-Հոգի Խաչուկ էմճէէս մնացած բաներուն կապոցն է։ Ի՛նչ տեսօք գիրքեր,—մե՛ղք որ կկարդամ կկարդամ, բան չիմ հասկընար.—ի՛նչ խըտար կտրած՝ հաղիր ըրած խալէմներ, գրած թուղթեր, տէֆթերներ, սեռնիքի քառօփքաներ, քարանտաշ, սուրկուչի կտորներ, չորս թապաղայ ճերմակ թուղթ, ողորմած-Հոգուն պաշփորթը, գլխի ֆէսը։ Ադէկ միտքս ընկաւ, աս առնում գլուխս կըսանտրիմ. . . ամա չէ. ես մազերս՝ մատերովս ալ կսանտրիմ. աս թող կենայ, հէլպէթ օր մը քանի մը քափիքով կըծախիմ։ (Ա՛ս միջոցին դուռը կզարնեն, եւ Վարդանովը սաստիկ վախնալ ձեւացընելով՝ կհարցընէ.) —Ո՞վ է։

ՎԱՐԴԱՆ (դուրսէն կանչելով).

Մելիք Գալուստիչ, ես եմ։

ՔԱՐՀԱՆՈՎ.

(Հուտ մը սնտուկը դոցելով.) Հինտի, շինտի. քիչ մը սապր արա կօշիկս հագնիմ. (Ժողովրդեան դառնալով.) Ա՛ս Վարդանի ծանն է, զայիր ստակս բերիլ է. (դուռը բանալով.) Ա՛ռամեցէ՛ք, հրամեցէ՛ք,—Վարդան աղբար։

ՏԵՍԻԼ Բ.

ՔԱՐՀԱՆՈՎ ԵՒ ՎԱՐԴԱՆ.

ՎԱՐԴԱՆ.

Բարև, Մելիք Գալուստիչ. ի՞նչ կընէք։

ՔԱՐՀԱՆՈՎ (ձեռքերուն նայելով).

Ի՞նչ պիտի ընենք . . . հրամանքիդ հարցընելու է։

ՎԱՐԴԱՆ·

Ես Մելիք Գալուստիչ, օրերս խիստ աղէկ կանցունեմ. ցորեկը պիպլիոթեքա (1) կերթամ, ժուռնալներ կկարդամ ու նոր նոր բաներ կիմանամ: գիշերն ալ շատ ատեն միսաֆիրութեան կերթամ, պալ-օներու (2) մէջ կըլամ, քատռիլներ, փոլ-քաներ, լանսիեներ, մազուրքաներ (3) կը-խաղամ: աղէկ ու գիտուն մարդիկներու հետ բարեկամութիւն կանիմ: անկէց զատ՝ աղէկ կուտիմ, կխմիմ, կհագնիմ, կքա-լիմ: մէկ խօսքով ամէն կերպով լաւ ու հանգիստ կապրիմ:

ՔԱՐՀԱՆՈՎ (հեգնական կերպով)·

Ի՛նչ ասիմ... շատ բան: (Ողջմնակի ժո-ղովրդեան ասելով)· — Ալայն ալ տրուբլթի բան, տրուբլթի... (Վարդանին դառնալով) Ես, Վարդան աղբար, գիտի՞ս ինչ կայ· ես ատ քու ըսած ալայ բաներուդ մէջ՝ սա՛լթը մէկ բան փայտալը կտեսնում:

(1) Ընթերցասիրաց Թանգարան:
(2) Պարահանդէս:
(3) Եւրոպական խաղերու անուն:

ՎԱՐԴԱՆ·

Ո՞ր բանը:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Միսաֆիրութեան երթալդ... աճապ այնպէս չը՞լլար որ գնացած տեղերդ ինծ ալ տանիս հետդ պարապար:

ՎԱՐԴԱՆ·

Ինչո՞ւ չէ. մեծ ուրախութեամբ կը-տանէի, էկեր ծան տայի՞ն:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Զայիր (1) քեզի ծա՞ն կուտան որ կերթաս:

ՎԱՐԴԱՆ·

Հապա ի՞նչ գիտէիր...

ՔԱՐՀԱՆՈՎ

Ես անպէս գիտիմ թէ դուն ալ ինծի

(1) Մէթ:

պէս մէկ խօլայը (1) գտածովդ՝ մէկէն ա-
սոր անոր կերակուրին վրան կհանիս:

ՎԱՐԴԱՆ·

Ո՛չ, Մելիք Գալուստիչ, հիչ անպէս
անարեսութիւնը մեզի կվայլէ՞:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Հէլպէթ չը՛վայլեր, հէլպէթ.....
(Ժողովրդական կամացուկ ասելով) Ան իսա, էկեր
հազիր տրապեզի տեղ (2) գիտնամ, գըլ-
խուս վրայ կվազիմ:

ՎԱՐԴԱՆ·

Ը, ատոնք ալայն ալ աղէկ. հրա-
մանքդ ի՞նչպէս կանցունէք ձեր օրերը:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Նա, շիտակն ըսեմ աղբարս, ասօր
պիւթիւն օրս ոտքի վրայ էի, ու տահա
շի՞նտը տուն եկայ որ քիչ մը յոգնու-

(1) Դիւրիւթիւն, հնարք:
(2) Պատրաստ սեղանի կամ կերակուրի տեղ:

թիւնս առնում: Գետինն անցնի ինա
զառաքի Սնթոսը. քանի մը հարիւր առ-
նելիք ունիմ վրան, գնալէն գալէն մէմն
եղայ: Տղայ մ՝ալ չունիմ որ ասպէս ա-
տեն ուղած տեղերս խրկիմ....

ՎԱՐԴԱՆ·

Մելիք Գալուստիչ, ինա մեր դրացի
Գարծախովի տղան, որ խեղճ հօրքրոջ
տունը կկենայ, ինչո՞ւ հոգեզաւակ չիք
առնուր: Առաջինը որ էօքսուզ է, հար
մար չունի. երկուսումն ալ, որ մէկ տա-
րիէն ուեզտնի ուչիլիշչայէն (1) կելլէ ու
ձեր ալայ բանին կհասնի:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Ը ինքն ի՞նչպէս է, սանքիմ աչքա-
բաց է:

ՎԱՐԴԱՆ·

Տղուն խօսք չկայ. ամա ուզենաք նէ՝
խրկիմ, կենէ հետը խօսեցէք նայեցէք:

(1) Գաւառական դպրոց:

*

ՔԱՐՀԱՆՈՎ·

Ընպէս է նէ՝ գնացածովդ իրկէ մէ-
մը տեսնիմ:

ՎԱՐԴԱՆ·

Շատ աղէկ, շատ աղէկ:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Էհ, տահա ի՞նչպէս հարցընենք:

ՎԱՐԴԱՆ·

Ի՞նչ բանի համար:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Սանքիմ գործի մործի մէ՞ջ էք, չէ
նէ . . .

ՎԱՐԴԱՆ·

Փառք Աստուծոյ. ասկէ երկու օր ա-
ռաջ ես ալ՝ Սողոմոնն ալ աղէկ տեղեր
գտանք: Ես կենեռալ Թոլսթօպրիւխովի
իմենիայի (1) մէջ ուփրավլեթէլ (2) մտայ
ամիսը 40 ռուպլիի. իսկ Սողոմոնը Մե-

(1) Կալուած:
(2) Կառավարիչ:

լիք-Ադամովի քովը քանթորշիկ (1) ե-
ղաւ, ամիսը 35 ռուպլիով:

ՔԱՐՀԱՆՈՎ

Օհ, աստ աղէկ բան է. տահա ի՞նչ
կուզիք:

ՎԱՐԴԱՆ·

Ուզած բան չունինք . . . .

ՔԱՐՀԱՆՈՎ·

Ընպէս է նէ, մեր 40 ռուպլին . . . . .

ՎԱՐԴԱՆ·

Է՞ա, ես ձեր 40 ռուպլին բերիլ իմ:

ՔԱՐՀԱՆՈՎ·

(Ուրախանալով) Վ՞Հառաստն ռուպլին.
աչքդ սիրիմ. իշթէ ստակը տաս՝ աս-
պէս մարդուն: Ո՞ւր է ճանս (անհամբերու-
թեամբ ասդիս անդին դարձընելով աչքերը):

ՎԱՐԴԱՆ·

Է՞բամէ, Մելիք Գալուստիչ:

(1) Գործավար:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Կեցիր նայինք թամամ է (սեղանին վրայ կողմնակի կհամրէ, եւ քանի մի պիլէթներուն հին եղածին վրայ դժգոհալով գրաւականը կուտայ)։ Դուն ալ հրամէ քու ուէհիններդ առ։

ՎԱՐԴԱՆ.

Հնորհակալ եմ,—մնաք բարով։

ՔԱՐՀԱՆՈՎ.

Երթաք բարով, ամա չմոռնաք ինա տղան իրկելը։

ՎԱՐԴԱՆ.

Ոչ, ոչ, հիմա կիրկիմ. [կելլէ]։

ՏԵՍԻԼ Գ.

ՔԱՐՀԱՆՈՎ (40 բուպլին անտուկը դնելով).

Հա՜տ զարմանք, որ իտա տղոցը ինա խըտար ամիսէք կուտան։ Քառասունվուրթը տարի է որ աշխարհիս վրան կապրիմ ամա, օր մը իտոր կէսին խըտար պիլէ ամիսէք առած չիմ... Ձօ՛ք շէյ... Էկէր ասինք խելօք ին՝ խելօք չին. զէրէ ստրկին խաթրը չեն գիտեր. էկէր ասինք լեղու բերան ունին՝ ան ալ չէ, զէրէ խօսքի մէջ ես անոնց ջուրը կտանիմ՝ ծարաւ ետ կբերիմ. էկէր ասինք կարդացող ին՝ ան ալ մեծ բան մը չէ, զէրէ անոնք ալ անպէս կխօսին, ինչպէս որ ես։ Ինպէս է նէ, ի՞նչ է.—իմ կարճ խելքովս՝ ուրիշ բան չէ, հապա քեօռ բաղդին յաջողութիւնը։ [Ելյս միջոցին Սամիկոնը դուռը կբանայ, և ներս կմտնէ]։

ՏԵՍԻԼ Դ.

ՔԱՐՀԱՆՈՎ ԵՒ ՄԱՄԻԿՈՆ·

ՄԱՄԻԿՈՆ·

Աղա, ինձի Վարդան աղան խրկից ձեզի:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Հա, ես ասիլ էի որ խրկէ: Հաձէ, դուն պապայ մամայ չունիս:

ՄԱՄԻԿՈՆ·

Ո՛չ, աղա:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Ը՞ շինող ինչ բանի վրայ ես:

ՄԱՄԻԿՈՆ·

Աղա, ուեղտնի ուչիլիշչային մէջ կը-կարդամ. եւ մէկ տարիէն եռքը՝ երբ քուրսը լըմընցընեմ (1), պիտի ելլեմ:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Մեծ բան կանիս: — Հաձէ, գիտիս ձեզ ինչ բանի համար ձան տուիլ իմ:

(1) Ուսումն աւարտեմ:

ՄԱՄԻԿՈՆ·

Գիտիմ, աղա. Վարդան աղան ինձի քովը ձան տուաւ, ու ըսաւ որ դուք կուզիք ինձի հոգեզաւակ ընել ձեզ, և ուսումս լըմընցընելէն եռքն ալ՝ առուտուրական գործի դնել:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Ան եռքի ըսածդ շիտակ է: Ինկէր խելօք տղայ ըլաս, խօսք մտիկ անիս, քիչ ատենէն վերջը՝ տեսնք խանութ մը կը-բանամ՝ ու քեզի կուտամ որ առուտուր ընես:—Ը՝, անունդ ու ֆամիլիէդ ինչ է:

ՄԱՄԻԿՈՆ·

Սամիկոն Գէորգեան Քարձախեան:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Զարմանք բան. անունդ անպէս կը-նմանի իմ անունիս, որ կարծես թէ ազգական ըլայինք.

Մելիք Գալուստիչ Քարհանով.

Սամիկոն Գէորգեան Քարձախեան.

Իմ հարը քարհան, քու հարը քարձախ.

դու հար մար չունիս, ես որդի չունիմ. ես տղայ կուզէի որ առուտուրի դնեմ, դուն պապայ կինտուէիր որ օգնէ քեզի. ասկէց աղէկ յարմարութիւն չը լլար. արի ձեռքիս պագ: (Ինքն ալ գլուխը կը պաղնէ): Ա՛լ ասկէց վերջը իմ գաւակս ես: Ստակս շատ, անունս մեծ, տուն, տեղ, պախչայ, ալայ բանը հազիր. սալթը դուն նայէ որ խօսքէս չելլիս. տունի մէջ պէտք եղած խըզմէթն ընես, աչքս մնանես.—ինծմէ ետքը ունեցած չունեցածս ալայն ալ քուկըդ կըլայ:

ՄԱՄԻԿՈՆ·

Աղա, ես ալ ասկէց ետքը յատուկ ծնողի տեղ կընդունիմ ձեզ. միայն թէ մէկէն չհանէիք վարժատունէն:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Նայէ նայէ, ատ խօսքիդ մէջ մե՛ծ պակութիւն կցուցընես. մէյմը առաջ աս գիտցիր թէ՝ հար մը որդուն հիչ դէշ կուզենայ:

ՄԱՄԻԿՈՆ·

Ոչ. ոչ, պապայ:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Եբկուսումն ալ աս որ, իմ կարծիքովը ուսում ըսածդ նաֆիկէ (¹) բան է, ու ատ խըտար կարդըցածդ՝ առուտուրի համար քեզ խիստ շատ է: Ինչո՞ւդ պէտք է ատկէց աւելին, աստղաբաշխ մի պիտի ըլաս թէ փիլիսոփայ, կամ թէ կուզիս որ կարդմունքիդ վրայ աշխարհք զարմանայ: Ձո՛ր ու ցամաք ուսումը՝ փոր չի կշտացըներ, տղաս. քեզի ինչ կասիմ, դուն ա՛ն լսէ.

Առուտուրըդ գըրեցիր,
Հիսապըդ լաւ իմացար.
Ըսել է թէ պըզտիկուց
Կարդմունքի մէջ մեծացար:

Ադկէց աւել ի՞նչ պէտք է քեզի:

ՄԱՄԻԿՈՆ·

Հէլպէթ, պապայ, դուք ինծմէն ա-

(¹) Ոչինչ:

ւելի բան տեսիլ իք աշխարհիս վրայ, ա-
ղէկն ու գէշն ալ ինծմէ շատ լաւ գիտիք:
Ասկէց վերջը՝ ձեր խօսքը թող ըլայ:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Ա՛ֆէրիմ տղաս, ատպէս, ատպէս խե-
լո՛ք եղիր, ու պապայիդ խօսքին մտիկ
ըրէ: Ես ալ երբ տեսնիմ որ խօսքս աղէկ
մտիկ կընես, վաղը մէկալ օրը մնտուկիս
մէջը պահած հազար չէշիտ անթիւքա-
ներս ալայն ալ քեզի կցուցընեմ. շինտի-
լիքտայ՝ գնա ծան տուր Մելքոյին, ու
դուն ալ հետը պարապար հոս արիցէք:
(Մամիկոնը կելլէ և Մելքոյին հետ մէկտեղ շուտով
ներս կմտնէ):

ՏԵՍԻԼ Ե.

ԱՌԱՋԻՆԷՆ ԵՒ ՄԵԼՔՈՅ.

ՔԱՐՀԱՆՈՎ.

Հա՛ծէ, Մելքոյ. գնա աշխանայէն
փլաթօքը առ ու արի հետս պարապար
պազար երթանք, որ հօրսուկը ուտելու
համար քիչ մը բան առնունք. զէրէ ա-
սօր օխտընճի օրն է, որ պասի սէպէպէն
պազար չիմ գնացած:

ՄԵԼՔՈՅ.

Աղա, աշխանան փլաթօք կայ որ:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Հա՛ծէ, հապա ան իմ սև փլաթօքս
ի՞նչ եղաւ:

ՄԵԼՔՈՅ.

Աղա, ան ալայ-մալայ պատրուտուիլ
էր ու:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Հա՛ծէ, քեզի վո՞վ կասէ որ նիփ-նոր
է.—ես փլաթօ՛քս կասիմ բեր:

ՄԵԼՔՈՑ (վախնալ ձևացնելով)·

Աղա, խիստ գէշ եղիլ էր, Թապլեցի(1):

ՔԱՐՀԱՆՈՎ (բարկացած)·

Էէ, Թապլեցիր (ծառային մօտենալով ու հագուստէն քաշքըշելով) հածէ, դուն իմ տունս կքանդիս, դուն իմ մուխս կմարիս.—քու մուխդ մարի... Տասուերկու տարի եղաւ որ ան փլաթօքը իմ ձեռքս էր, շինտղ աշխանան ընկաւ տէ, գէշ եղաւ:—Հիտակն ըսէ, հածէ. պէլքի կորուցիր:

ՄԵԼՔՈՑ·

Աղա, էկէր շիտակն ասիմ, չիս ծեծի:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Ըէ, չէ:

ՄԵԼՔՈՑ·

Աղա, մեր դրացի Ռիրքորին տղան ասաց որ, ես աշխանան չեղած իքէնս՝

(1) Դուրս ձգեցի:

իրենց Առափքան (1) քուինայէն տարիլ է ու ալայ-մալայ (2) պատրուտիլ է:

ՔԱՐՀԱՆՈՎ (սատիկ նեղանալով)·

Ի՛նչ ի՞նչ... Առափքան, շունը պատրուտիլ է. կեցիր անզգամ, ես քեզի շինտղ կցուցընեմ պատրուտին ինչպէս կըլայ... (Քարհանովը մահճակալի վերի կողմը դրած բարակ փայտը ձեռքն առնելուն պէս՝ Մելքոն ասդին անդին ընկնելով կփախչի, Քարհանովն ալ ետևէն. իսկ Մամիկոնը՝ մինչդեռ զարմացած կընայի, վարագոյրը կիջնայ):

(1) Շունի անուն:

(2) Թալորովին:

ԸՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ.

ՑԵՍԻԼ Ա.

(Քարհանովի տունը անփոփոխ կմնայ, և վարագոյը բացուելուն պէս՝ կըսէ Մամիկոնը.)

ՄԱՄԻԿՈՆ.

Պապաս էփէյի (1) բարկացող է ամա, Ստուած վերջը բարի ընէ . . . Մէկ մէկ ատեն միտք կանիմ, որ ձգիմ փախչիմ. մէմալ կասիմ որ հօրքուրս՝ անոր ինչպէս մարդ եղածը չիգիտնալով՝ կէնէ ինծի պիտի ընէ խապահաթը (2): Հոս կենամ, մէկ պէլայ, ելլիմ՝ ուրիշ պէլայ. շիտակն ըսեմ, ես ալ չիգտիմ ինչ արածը: Ընկէց պաշխայ, աս երկուսում օրն է որ վրաս ջերմի պէս բան մը փէյտայ եղիլ է, տայմա կմրսիմ. տունն ասիս, հիչ

(1) Բաւական

(2) Ցանցաւոր

չին վառիր: [Ադին անդին նայելով.] Բան մ՝ալ չկայ որ վրաս առնում ու քիչ մը տաքնամ: [Դուրսէն ոտքի ձայն կըլսէ.] Հանա, պապաս կուգայ, տեսնինք պազարն ի՞նչ ըրաւ:

ՑԵՍԻԼ Բ.

ՄԱՄԻԿՈՆ ԵՒ ՔԱՐՀԱՆՈՎ.

ՔԱՐՀԱՆՈՎ.

Ասպէս ալ թանգութիւն կըլայ . . . Ստուած ինա մաթրապազներուն (1) պէլանները տայ. անոնց սէպէպով՝ ալայ բանի գինը երեք խաթ եղիլ է. որտեղ է մեր առջի ատենի հօխան մէկ քափիք սօխը. որտեղ շինտի ողորմած-հոգի Հաճի Սաթոսին ասկէց իթսուն տարի առաջ նախըլ ըրած (2) 100-ը հինգ քափիք հաւկիթը, որ գերեզմանաքարին վրան գրել

(1) Դիւղացիներէն ուժան գնով առնող ու թանկ ծախող մարդոց տրուած անուն:

(2) Պատմած:

տալով՝ թանկ է տէյին՝ գանգատ կընէ, ու „ասկէց ետքը՝ թող պարծենայ, կըսէ, աղէկ տուն նայողը“. ո՞ւր է, մէմը աչքդ բանայիր ու տեսնէիր թէ շինող հաւկիթին մէկը մէկ քափիքով պիլէ դժար կգտնուի: Ո՞վ լսիլ է որ սոխին փունթը երկու քափիք ըլայ, միսին հօխան տասնըհինգ քափիք, քարթօֆին հօխան ութը քափիք, օրթա խարէր (1) ալիւրին փուքը մանէթ ու կէս, լոպիան ասիս՝ հօխան տասնօ՛խթը քափիք. հապա փէթրուշքան, ալ մ՚ըսեր, կապոցը մէ՛կ քափիք, ան ալ անպէս՝ որ վեր վերուցած իքէնդ, չիս իմանար որ ձեռքիդ մէջը բան կայ: Ինճամը (2), ինչ գլխացաւութիւն անիմ. կովն ճիկարէն աժան բան չգտայ պազարը. իրէք քափիքի բան առի, շէ՛ն կենայ Աղամաթ աղան, անպէս մեծ կտրից որ քանի մի օր կէչինմիշ (3) ըլալու ձեռք պիտի տայ: (Մամիկոնին դառնալով.) Ը՞ածէ, քեզ ի՞նչ եղիլ է որ գունդ փախիլ է:

(1) Մէջակ:
(2) Վերջապէս:
(3) Անցնելու:

ՄԱՄԻԿՈՆ.

Պապայ, ասօր երկուսում օրն է որ վրաս տաքութիւն կուգայ. շինող ալ կմրսիմ:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Կմրսիս նէ՝ ինչո՞ւ չիս ասիր որ սօպան (1) վառէ: (Դէպի դուռը նայելով.) — Մ՚ելքդ:

Ը՞բամէ, աղա:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Ը՞ածէ գնա փատ բեր սօպան վառէ:

ՄԵԼՔՈՇ.

Աղա, ասօր չորսում օրն է որ ճղիլ (2)

(1) Հնոց, կրակարան:
(2) Փայտի մանրուք:

չունինք: Փատերնիս ալ ամիս մը կայ որ լմընցիլ է:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Ի զարար չէ. գնա մեր պախչայէն քիչ մը չոր խոտ ժողվէ վառէ, մինչև որ աս օրերս կառնում:

ՄԵԼՔՈՑ.

Աղա, պախչան անպէս թէմիզցուցիլ իմ որ ճարի համար մէկ հատիկ խոտ փնտռիս նէ՝ չես գտներ:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Ընպէս է նէ, դրացինին պախչան նայելու է, էկեր (1) ինքը հոն չէ, գնա քիչ մը անկէց ժողվէ:

ՄԵԼՔՈՑ.

Աղէկ, աղա:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Սամիկոն, դուն ալ գնա որ քիչ մը շատ ժողվինք:

(1) Եթէ:

ՄԱՄԻԿՈՆ.

Պապայ, պախչային տէրը էկէր վրա՝ներս հանի՝ ի՞նչ անինք:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Ան ատենը ըսէք որ դուք ձեզմէն գնացիլ իք պախչային գէշ խոտերը թէմիզցընելու:

ՄԱՄԻԿՈՆ.

Հաստ աղէկ, պապայ. (կելլէն):

ՑԵՍԻԼ Գ.

ՔԱՐՀԱՆՈՎ (ժողովրդեան դառնալով).

Հապա, ալայ բանը պէտք եղածովը էկէր ստակ տաս առնուս, անոր ծարը ո՞ւր կհանի: Քանի մը օր պախչային չոր խոտերը կվառինք, քանի մը օր առանց վառելու կանցնինք, քանի մը օր ալ դրացինին պախչայէն կժողվինք, կըլայ կերթայ. ստակ ըսածդդ՝ ձեռքի աղտ է, մէկ երկուս լուացիր՝ կելլէ կերթայ. բանը անոր պահելը գիտնալն է, գիտնալը:

ՑԵՍԻԼ Դ.

ՔԱՐՀԱՆՈՎ, ՄԵԼՔՈՑ ԵՒ ՄԱՄԻԿՈՆ·

ՄԵԼՔՈՑ (Թանչոց տալով ներս կմտնէ չոր խոտը ձեռքին)·

Ռերի՛նք աղա, սօպան վառի՛նք:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Սօպան իրկունը կվառի՛ք: — Դուն աս ըսէ թէ՝ Մամիկոնն ալ բերա՞ւ:

ՄԱՄԻԿՈՆ (չոր խոտը ձեռքին ներս մտնելով)·

Պապայ, ես ալ աս խըտարս բերի:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Ը՛ֆերիմ տղաս . . . . մարդ չտեսա՞ւ:

ՄԱՄԻԿՈՆ·

Պախչային տէրը Թէկարան (1) դուռը բացաւ որ մեր սէմթը գայ. մենք ան սա՜հաթին խոտը առնելն ու փախչելը մէ՛կ ըրինք:

ՔԱՐՀԱՆՈՎ·

Ը՛ֆերիմ տղաքս. ատպէս աչքաբաց

(1) Հազիւ թէ:

ըլալու է:—Նայ, Մամիկոն, ասօր զառաֆ Մաթոսին պիտի երթամ, դուն տունը կեցիր մինչև իմ գալս, ու նայէ որ դուռը չկըպղած՝ դուս չելլիս:

ՄԱՄԻԿՈՆ·

Հատ աղէկ, պապայ, դուք միամիտ եղիք. ես աղէկ կնայիմ:

(Քարհանովը կելլէ:)

ՑԵՍԻԼ Ե.

ՄԱՄԻԿՈՆ ԵՒ ՄԵԼՔՈՑ·

ՄԵԼՔՈՑ·

Հէյթան կիթտի, մէյտան պիզէ գալտի: Ամա մարդ հա՜, ասօր պաղարէն մինչև իրեք քափիքի ճիկեր առնուլը՝ քառասուն մարդու հետ կռուեցաւ. — աս թանկ է, ան թանկ է. աս քիչ է, ան պզտիկ է: (դառնալով առ Մամիկոն.) Ա՛նըմ, Մամիկոն, աս մեր աղան շատ նէքէս (1) մարդ է:

(1) Կծծի, ադահ:

ՄԱՄԻԿՈՆ·

Ի՞նչպէս:

ՄԵԼՔՈՑ·

Երեկ իրկուան չրախ չկար ու մութը տեղը մնացիլ էի. գնացի „Աղա ըսի, աշխանան մութ է, չրախ չունիմ: — Ժածէ ըսաւ, փալթոյիս քակուած տեղը կարեցի՞ր:—Ան ցորեկը լմընցուցի, ըսի:— Ընպէս է նէ՝ շինտղ բան չունիս, ըսաւ, ի՞նչ պիտի ընես չրախը. գնա պառկէ, երբ պէտք ըլաս նէ՝ ծան կուտամ կուգաս“: Ես խօսքին վրայ իմիս սիրտս եաւ. „Աղա, ըսի, ճամբան խիստ մութ է, ի՞նչ անիմ:— Տահա կխօսիս, կորսուէ սըտեղէն. քէօռ ըլայիր նէ՝ ի՞նչ պիտի ընէիր“ կանչեց. ու ես ալ վախնալէն փախայ, գնացի,—մեղքս ի՞նչ պահիմ,— դրացինին աշխանայէն երկու չրախ գողցայ, մէկին կէսը երեկ վառեցի, մէկուկէսն ալ տահա կեցած է:

ՄԱՄԻԿՈՆ·

Ատ ալայը աղէկ ամա, դրացինին աշխանայէն չրախ գողցածդ աղէկ չէ ու:

ՄԵԼՔՈՑ·

Ի՞նչ բանի համար աղէկ չէ:

ՄԱՄԻԿՈՆ·

Ընոր համար որ մեղք է:

ՄԵԼՔՈՑ·

Ի՞նչ կասիս, Մամիկոն. աղան անցած օրը ինծի ղրկից որ Թօփալ Մելքումենց ազգարին ֆըչիէն քիչ մը քացախ գողնամ. բերելէս ետքը՝ „Աղա, ըսի, մեղք չէ՞ աս ըրածս:—Ատոր մեղքը իմի՞ս վիզս ըլայ, ըսաւ. դուն ո՛րքան կրնաս՝ բեր“:

ՄԱՄԻԿՈՆ·

Օ՜օ՜, ատ գէշ բան է: Ես ատոր, շիտակն ըսեմ՝, չհաւնեցայ:

ՄԵԼՔՈՑ·

Ի՛նքդ ալ գողութիւնի գնացիր ու, չհաւնեցա՞ս որն է:

ՄԱՄԻԿՈՆ·

Ժածէ, ե՞րբ:

ՄԵԼՔՈՑ.

Հապա ասօրուան չոր խոտ բերածդ ի՞նչ բան էր:

ՄԱՄԻԿՈՆ (քիչ մը մոտենալով).

Հա՛ծէ, շիտակ կասիս. ան ալ գողութիւն էր, հապա ի՞նչ էր:

ՄԵԼՔՈՑ.

Ան տահա ի՞նչ, ան երկուսում օրն էր անպէս ըրաւ, տահա տահա քանի մի օր կեցիր, նայէ ինչե՞ր կսորվիս...

ՄԱՄԻԿՈՆ.

Ընպէս է նէ՝ պապաս եկածովը ես ալ չիմ կենար, — կելլիմ քովէն:

ՄԵԼՔՈՑ.

Սամիկոն, քեզի մէկ բան մ՚ըսեմ:

ՄԱՄԻԿՈՆ.

Ի՞նչ:

ՄԵԼՔՈՑ.

Խե՛ւ կըլաս, էկէր ելլիս: Դուն ալ գիտցար շինտղ որ ան ստակները մեզի

պէս տղոց գողութիւնովն ու իրեն խըզդանճութիւնովը (1) ժողվիլ է: Հապա ի՞նչ անիս աղէկ է, գիտի՞ս.... դուն չինքի տունին մէջն իս, քուն եղած ի-քէնը մնտուկին բալլիքը առ տէ՝ ստրկին տօպրակը հանէ, բեր ինծի, ու իմիս չինիի կտորներով լցած տօպրակս տար ա-նոր տեղը դիր. մէկալում օրը քովէն կելլինք ու փայ կանինք մէջերնիս: Յետոյ կերթանք Սարկ....

ՄԱՄԻԿՈՆ (Մելքոյի խօսքը կարելով).

Հա՛ծէ, ոտքի ծան կուգայ, ալլէհալըմ (2) պապան է, շուտ ըրէ ել, որ քեզի տահա սըտեղս չտեսնէ:

ՄԵԼՔՈՑ.

Էկէր տեսնէ, կասիմ, օտան (3) կաւլէի. դուն նայէ որ ըսածս չմոռնաս: (Կելլէ Մելքոն):

---

(1) Նախանձոտ, ընչաքաղց:
(2) Կերևի թէ. — կարծեմ:
(3) Սենեակը:

ՄԱՄԻԿՈՆ (ինքն իրեն).

Կեցիր, ես սուտէն քուն ըլամ, նայինք գայ նէ՝ ի՞նչ կըսէ. (Կպառկէ)։

ՏԵՍԻԼ Զ.

ՄԱՄԻԿՈՆ ԵՒ ՔԱՐՀԱՆՈՎ.

ՔԱՐՀԱՆՈՎ (ներս մտնելով).

Ո՜հ, յոգնեցայ [թանչելով]. Գետինն անցնէր զառաջ Մաթոսը տէ՝ խալսէյինք . . . Ասպէս ալ անաստուած մարդ կըլայ աճապ . . . ոչ ստակս կուտայ որ խալսիմ, ոչ ալ պարտք չիմ կասէ, որ ձեռքերս լուամ՝ եւ կենամ . . . (Մամիկոնին դառնալով.) Նայէ նայէ, իսա տղան ալ քուն կըլայ . . . . Մամիկո՛ն, Մամիկո՛ն: (Մամիկոնը իբր թէ քունէն կելլէ եւ կամաց կամաց ոտքի կանգնելով՝ ուշադրութեամբ կըսէ.) Ֆերիք եղաւ քուն եղածդ. էլ տունը նայէ՛ տէ՝ քիչ մը ալ ես պառկիմ (Հէպի բաները բարձի տակը կդնէ)։

ՄԱՄԻԿՈՆ.

Ֆրամէ՛ պապաս, հրամէ՛, զերէ ձեր չարչարանքը քաշելու բան չէ:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Ֆապա տղաս, ծածկէ վրաս. թող քիչ մը պառկիմ:

ՄԱՄԻԿՈՆ [ծածկելէն յետոյ խաչակնքելով].

Ընշարժ եղիցիս մինչ ի բացումն դանճարանիդ:

ՄԵԼՔՈՑ [դուռին կէսը բանալով].

Մամիկոն, նա՛ տօպրակը (1):

ՄԱՄԻԿՈՆ [ցած ձայնով].

Կեցիր առաջ բալլիքը փնտռիմ. (քանի մի տեղ նայելէն յետոյ՝ կերթայ բարձին տակէն զգուշութեամբ կհանէ, և) գտայ, գտայ. (Քարհանովին դառնալով.) տես. քու գլխուդ ինչ կբերեմ: (Շուտով մնտուկը կբանայ, և տօպրակը փոխելէն ու Մելքոյին տալէն յետոյ բանալին տեղը կդնէ)։

ՔԱՐՀԱՆՈՎ (Երազի մէջ Մաթոսի հետ կռուելով).

Յայ անիծա՜ծ Մաթոս. էկէր պարտք տալը չես գիտեր, ինչո՞ւ կառնուս, անամօթ . . .

---

(1) Ա՛ռ տօպրակը։

ՄԱՄԻԿՈՆ.

Էրածին (1) մէջ՝ զառաջ Մաթոսին հետ կկռուի զայիր (2):

ՔԱՐՀԱՆՈՎ [երազին մէջ].

Ձէ, անկէց 50 ռուպլի հիչ տուած չիս . . . .

ՄԱՄԻԿՈՆ.

Զայիր անկէց 50 ռուպլին տուիլ իմ, կըսէ, զառաջ Մաթոսը:

ՔԱՐՀԱՆՈՎ [երազին մէջ].

Ի՛նչպէս ի՞նչպէս. որո՞ւ գլուխը կջարդիս, զայիր համ ատակ տամ, համ գլուխը ջարդիս . . . .

ՄԱՄԻԿՈՆ.

Զայիր զառաջ Մաթոսը, „Էկէր ան իմ տուած 50 ռուպլիս ինքեար անիս (3), կըսէ, գլուխդ կջարդիմ“:

(1) Երազ:
(2) Կերեւի թէ:
(3) Ուրանաս:

ՔԱՐՀԱՆՈՎ (երազին մէջ).

Դո՞ն . . . շինտղ ես փոլիցան . . . .

ՄԱՄԻԿՈՆ.

Ա՛ֆերիմ պապաս, էրածին մէջ պիլէ փոլիցաներու դռները քաշ կուգայ:

ՔԱՐՀԱՆՈՎ (երազին մէջ).

Վա՜յ մէջքս . . . .

ՄԱՄԻԿՈՆ.

Զայիր փոլիցայի անունը բերնէն ելածին պէս՝ թմփոցը կոխից զառաջ Մաթոսը:

ՔԱՐՀԱՆՈՎ (երազին մէջ).

Վա՜յ վեզս, վա՜յ գլուխս, (այս վերջինը այնպէս բարձր կկանչէ, որ քունէն կելլէ:) Ո՛հ, ոհ. վա՜յ զառաջ Մաթոս, Աստուած պէլատ տայ, ալայ խապուռդաներս (1) կոտրըտեցիր . . . (ադին անդին նայելով, ու իրր թէ քիչ մը ինքը իրեն գալով.) — Մամիկոն:

(1) Ոսկոռներս:

ՄԱՄՈՒԿՈՆ.

Հրամէ՛, պապայ:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Հածէ, մարդ չեկաւ հոս:

ՄԱՄՈՒԿՈՆ.

Ոչ, պապայ. ի՞նչ մարդ պիտի գար:

ՔԱՐՀԱՆՈՎ.

Ընպէս էնէ՝ երազ էր տեսածս. թիւ երեսիդ, զառաքի Մաթոս: (Ռիչ մը մտածելէն յետոյ.) Գնա Մամիկոն, Մելքոյին ըսէ որ պապան եկաւ, թող կերակուրը հազիր ընէ:

ՄԱՄՈՒԿՈՆ.

Շինող, պապայ: (Կելնէ։)

ՑԵՍԻԼ Է.

ՔԱՐՀԱՆՈՎ (Սնտուկին քովը երթալով).

Իմ հոգիս, իմ ճանս. աս քանի՞ ատեն է որ վրադ չիմ նայած. (Սնտուկը կը-բանայ և տոպրակը վեր ի վար ձգելով՝ կըսէ.) Ո՛հ իմ տեսո՛ւքս, իմ աչքիս լուսը . . .

Փող — աշխարհ շինող,
Փող — իմ հոգւոյս ցող.

(Այս ըսելէն յետոյ երկբայական կերպով ձեռքովը կշռփէ տոպրակը և նուրբ կերպով ականջ դնելով՝ կըսէ չինիի կտորներուն բաղաձայն հնչմունքը, որով և չհաւատալ ձևացընելով՝ նորէն վեր ի վար կձգէ տոպրակը հետագայ խօսքերն ասելով.)

Փող — անուն հանող.
Փող — լեզու տրւ . . . . .

(Լեզուն կկապուի և տոպրակը ձեռքէն վար ձգելով՝ ինքը շնչասպառ յատակին վերայ կընկնի.) Վառաւուլ, քառաւուլ (կանչելով։ Գողացիները իսկոյն կժողվըտին, և մէկէն մարդ կուղարկեն որ փօլիցայէն քվարթալնից կանչեն)։

ՏԵՍԻԼ Ը.

ԴՐԱՑԻՔ, ՄԵԼԻՔՈՆ, ՄԱՄԻԿՈՆ, ՔԱՐՀԱՆՈՎ, ՔՎԱՐԹԱԼՆԻՑ ԵՒ ՏԱՍՆԱՊԵՏՔ ՓՈԼԻՑԻԱՑԻ։

ՔՎԱՐԹԱԼՆԻՑ.

Что случилось съ Меликъ Калустичемъ? (1)

ԴՐԱՑԻՆԵՐԸ.

Обокрали его. (2)

ՔՎԱՐԹԱԼՆԻՑ.

Когда? (3)

ԴՐԱՑԻՆԵՐԸ.

Когда онъ спалъ. (4)

ՔՎԱՐԹԱԼՆԻՑ.

Кто у него находился въ то время? (5)

ԴՐԱՑԻՆԵՐԸ.

Эти мальчики. (5) (Մելքոնն ու Մամիկոնը ցուցընելով.)

(1) Ինչ եղել է Մելիք Գալուստիչին։
(2) Բաները գողցել են։
(3) Երբ։
(4) Քուն եղած ատենը։
(5) Ան ատենը ով կար քովը։
(6) Այս տղաքը։

ՔՎԱՐԹԱԼՆԻՑ (Տասնապետներուն).

Взять ихъ и сейчасъ-же арестовать. Видишь разбойники до чего добрались! (1) (Տասնապետները քաշքըշելով կոտանեն տղաքը. իսկ Քարհանովը իրը թէ քիչ մը շունչ առնելով.)

ՔԱՐՀԱՆՈՎ.

Տարէք, տարէք ատ բաղպօյնիկնե-ը ճանները հանեցէք։ Իմ սորվեցու-ցածը իմ գլխուս բերին։

ԴՐԱՑԻՆԵՐԸ (Քարհանովը վերցընելով).

Մելիք Գալուստիչ, էլ, էլ տեղէդ, զարար չէ. ան տղայութիւն մըն է, արիլ ին. հէլպէթ դուն քու ստակդ երբ ըլայ՝ կառնուս։

ՔԱՐՀԱՆՈՎ.

Ո՛Հ, մի՛ ըսէք . . . խապահաթը (2) իմի՛նս է, իմի՛նս. ես եղայ իտա տղոց աղպէսնակ ըլալուն սէպէպը, զերէ ինքս ալ աշխարհիս ունայն սիրոյն խաբուելով՝ բոլոր կեանքս փճացուցի։ (Այս խօսքէն յետոյ՝ ծանր ու զղջական եղանակաւ կասէ ժլատի երգը։)

(1) Տարէք զիրենք, և իկոյն փակեցէք։ Կտեսնես աւազակներն ինչ բաներ կընեն։
(2) Ցանցանքը։

ԺԼԱՑԻ ԵՐԳԸ.

(Ըստ եղանակին)

„Երկինք զբաւթ ակնարկեն,
„Նահապետն ի սիրտ ցընծայ.
„Զանձն Աստուծոյ ի նըւէր,
„Որ և կենօք ճոխանայ։
„Աստուածապաշտն ի յասպարէզ,
„Գոռոզն ինքնին կորանայ։“

1.

Ունայն սիրով աշխարհի
Կեանքս անցուցի զուր տեղը,
Սուտ ըստրկին խաբեելով
Հասայ մինչև այս տեղը։
Ինձ ձեզ առէք դուք օրինակ,
Ժլատի վերջն է այս տեղը։

(Դրացիներն ի միասին).

Մենք քեզ առնունք մեզ օրինակ,
Ժլատի վերջն է այդ տեղը։

2.

Նանսիթք ինծի կասէին։
Փող սիրելէն դարձ արի.

Ես հակառակ այն խօսքին
Կացայ մինչև այս տեղը։
Ինձ ձեզ առէք դուք օրինակ,
Ժլատի վերջն է այս տեղը։

(Դրացիներն ի միասին).

Մենք քեզ առնունք մեզ օրինակ,
Ժլատի վերջն է այդ տեղը։

3.

Գողցան ձեռքէս փողերըս,
Պակսեց գընաց օրերըս,
Եւ այն ժամուն հարուածը
Մընաց սըրտիս մէջ տեղը։
Ինձ ձեզ առէք դուք օրինակ,
Ժլատի վերջն է այս տեղը։

(Դրացիներն ի միասին ընդ Ժլատին).

Այս մեզ լինի մի՛շտ օրինակ,
Ժլատի վերջն է այս տեղը։

(Պարադայը կիջնայ)։

ՎԵՐՋ։

Публичная Библиотека 7/31 1922 Ереван, Мясникова

18344

2013